





# ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

**1** Երեխա (անչափահաս) է համարվում 18 տարեկանը չլրացած յուրաքանչյուր անձ:

**2** Բոլոր երեխաներն օժտված են բոլոր այս իրավունքներով՝ անկախ այն բանից, թե ով են, որտեղ են ապրում, ինչ լեզվով են խոսում, ինչ կրոն են դավանում, ինչ են մտածում, ինչպիսի արտաքին ունեն, տղա՞ են, թե՝ աղջիկ, հաշմանդամություն ունեն, թե ոչ, հարու՞ստ են, թե՝ աղքատ և անկախ այն բանից, թե ովքեր են նրանց ծնողները կամ ընտանիքի անդամները, ինչի են հավատում կամ ինչով են զբաղվում: Որևէ երեխա որևէ պատճառով չպետք է արժանանա վատ վերաբերմունքի:

**3** Երբ ծնողները որոշում են կայացնում, նրանք պետք է հաշվի առնեն, թե ինչպես են իրենց որոշումները ազդելու երեխաների վրա: Մեծահասակները պետք է անեն այն, ինչը լավագույնն է երեխաների համար: Կառավարությունները պետք է ապահովեն, որ երեխաները պաշտպանված լինեն և խնամվեն իրենց ծնողների կամ, անհրաժեշտության դեպքում, այլ մարդկանց կողմից: Կառավարությունները պետք է ապահովեն, որ երեխաների խնամքի համար պատասխանատու անձինք կամ կազմակերպությունները իրենց աշխատանքը լավ կատարեն:

**4** Կառավարությունները պետք է անեն հնարավոր ամեն ինչ, որ յուրաքանչյուր երեխա իր երկրում լիովին օգտվի Կոնվենցիայում ամրագրված բոլոր իրավունքներից:

**5** Կառավարությունները պետք է ընտանիքներին կամ համայնքներին թույլ տան՝ երեխաներին ուղղորդել այնպես, որ նրանք, մեծանալով՝ սովորեն լավագույնս օգտվել իրենց իրավունքներից: Որքան ավելի մեծ են երեխաները, այնքան ավելի քիչ ուղղորդման կարիք ունեն:

**6** Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք: Կառավարությունները պետք է պաշտպանեն երեխայի՝ ապրելու և առավելագույնս զարգանալու իրավունքը:

**7** Երեխաները ծնվելուց հետո պետք է գրանցվեն և կառավարության կողմից պաշտոնապես սահմանված կարգով անուն ստանան: Երեխաները պետք է որևէ երկրի քաղաքացի լինեն: Հնարավոր բոլոր դեպքերում երեխաները պետք է ճանաչեն իրենց ծնողներին և նրանց խնամքի տակ գտնվեն:

**8** Երեխաներն ունեն ինքնության՝ իրենց «ով» լինելու պաշտոնական գրանցման իրավունք, ներառյալ՝ անուն, քաղաքացիություն և ընտանեկան կապեր: Որևէ մեկը իրավունք չունի երեխաներին զրկելու ինքնությունից, սակայն եթե դա տեղի է ունենում, կառավարությունները պետք է օգնեն երեխային՝ հնարավորինս արագ վերականգնելու այն:

**9** Երեխաները չպետք է առանձնացվեն իրենց ծնողներից, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք երեխաների մասին բավարար հոգ չեն տանում, բռնության են ենթարկում կամ վնաս են հասցնում նրանց: Այն երեխաները, ում ծնողները միասին չեն ապրում, պետք է կարողանան պահպանել կապը երկու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա վնաս է հասցնում երեխային:

**10** Եթե երեխան չի ապրում նույն երկրում, որտեղ ապրում են իր ծնողները, կառավարությունները պետք է թույլ տան նրան և ծնողներին՝ ճամփորդել և պահպանել կապը միմյանց հետ:

**11** Կառավարությունները պետք է բացառեն երեխային անօրինական կերպով երկրից դուրս բերելու դեպքերը, օրինակ, երբ երեխան առևանգվում է կամ ծնողներից մեկի կողմից տեղափոխվում է այլ երկիր՝ առանց մյուսի համաձայնության:

**12** Երեխաները իրենց վերաբերող խնդիրների շուրջ ազատ կարծիք հայտնելու իրավունք ունեն: Մեծահասակները պետք է լսեն նրանց և լուրջ վերաբերվեն նրանց կարծիքին:

**13** Երեխաները ունեն սեփական գիտելիքները, մտքերը, զգացմունքները և ունեն դրանք զրուցելով, նկարելով, գրելով կամ ցանկացած այլ միջոցով ուրիշներին ազատ ներկայացնելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա վնասում է ուրիշներին:

**14** Երեխաները կարող են ազատ ընտրել իրենց մտքերը, կարծիքները և կրոնը, սակայն դա չպետք է խանգարի մյուսներին՝ օգտվելու իրենց իրավունքներից: Ծնողները կարող են ուղղություն ցույց տալ երեխաներին՝ իրավունքներից օգտվելու հարցում:

**15** Երեխաները կարող են ստեղծել խմբեր կամ կազմակերպություններ և միանալ դրանց, ինչպես նաև կարող են հանդիպել ուրիշների հետ, եթե դա չի վնասում նրանց:

**16** Յուրաքանչյուր երեխա ունի անձնական կյանքի իրավունք: Օրենքը պետք է ցանկացած ոտնձգությունից պաշտպանի երեխաների անձնական կյանքը, ընտանիքը, տունը, հաղորդակցությունը և բարի անունը:

**17** Երեխաները իրավունք ունեն տեղեկատվություն ստանալու համացանցից, ռադիոյից, հեռուստատեսությունից, մամուլից, գրքերից և այլ աղբյուրներից: Մեծահասակները պետք է ապահովեն, որ այդ տեղեկատվությունը վտանգավոր չլինի: Կառավարությունները պետք է խրախուսեն լրատվամիջոցներին՝ տարատեսակ աղբյուրներով և բոլոր երեխաներին հասկանալի լեզուներով տարածելու տեղեկատվությունը:

**18** Ծնողները երեխաներին դաստիարակելու հիմնական պատասխանատուներն են: Եթե երեխան չունի ծնողներ, այդ պատասխանատվությունը կրում են այլ չափահաս մարդիկ. նրանք կոչվում են խնամակալներ: Ծնողները և խնամակալները պետք է միշտ հաշվի առնեն, թե ինչն է լավ երեխայի համար: Կառավարությունները պետք է օգնեն նրանց: Երկու ծնողների առկայության դեպքում երկուսն էլ պատասխանատու են երեխայի դաստիարակության համար:

**19** Կառավարությունները պետք է երեխաներին պաշտպանեն նրանց խնամող որևէ մեկի կողմից գործադրվող բռնությունից, շահագործումից և անտեսումից:

**20** Յուրաքանչյուր երեխա, ով չի կարող խնամվել սեփական ընտանիքում, իրավունք ունի համապատասխան խնամք ստանալու այն մարդկանց կողմից, ովքեր հարգում են երեխայի կրոնական պատկանելությունը, մշակույթը, լեզուն և կյանքի մյուս ոլորտները:

**21** Երեխաների որդեգրման ժամանակ կարևոր է նրանց համար անել լավագույնը: Եթե երեխան չի կարող անհրաժեշտ խնամք ստանալ սեփական երկրում, օրինակ՝ ապրել այլ ընտանիքում, նա կարող է որդեգրվել այլ երկրի քաղաքացիների կողմից:

**22** Իրենց հայրենիքում ապրելու վտանգավոր լինելու պատճառով, որպես փախստականներ, այլ երկրներ տեղափոխված երեխաները պետք է աջակցություն և պաշտպանություն ստանան և ունենան նույն իրավունքները, ինչ այդ երկրում ապրող երեխաները:

**23** Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր երեխա պետք է լինի հասարակության լիարժեք անդամ: Կառավարությունները պետք է վերացնեն հաշմանդամություն ունեցող երեխաներին հանդիպող բոլոր խոչընդոտները, որպեսզի նրանք լինեն անկախ և ակտիվ մասնակցեն հասարակական կյանքին:

**24** Երեխաները առողջապահական լավագույն ծառայությունների, մաքուր ջրի, առողջ սննդի, մաքուր և անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունք ունեն: Բոլոր չափահասներն ու երեխաները պետք է իմանան, թե ինչպես կարող են անվտանգ և առողջ մնալ:

**25** Խնամքի, պաշտպանության կամ առողջության նկատառումներով տնից հեռու գտնվող յուրաքանչյուր երեխայի դրությունը պետք է կանոնավոր ստուգման ենթարկվի՝ համոզվելու համար, որ նրա մոտ ամեն ինչ կարգին է, և որ այն վայրը, որտեղ նա գտնվում է, շարունակում է նրա համար լավագույնը լինել:

**26** Կառավարությունները պետք է դրամական միջոցներ կամ այլ աջակցություն տրամադրեն անապահով ընտանիքներին՝ երեխաներին օգնելու նպատակով:

**27** Երեխաները հնարավորինս լավ զարգանալու համար անհրաժեշտ սննդի, հագուստի և անվտանգ վայրում ապրելու իրավունք ունեն: Կառավարությունները պետք է օգնեն այն ընտանիքներին և երեխաներին,ովքեր չունեն այս իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ միջոցներ:

**28** Յուրաքանչյուր երեխա ունի կրթության իրավունք: Նախնական կրթությունը պետք է լինի անվճար: Միջնակարգ և բարձրագույն կրթությունը պետք է հասանելի լինի յուրաքանչյուր երեխայի համար: Երեխաներին պետք է խրախուսել, որ կրթությունը շարունակեն մինչև հնարավոր ամենաբարձր աստիճանը: Դպրոցի կարգապահական կանոններում պետք է հաշվի առնվեն երեխայի իրավունքները և երբևէ բռնություն չպարունակեն:

**29** Երեխաների կրթությունը պետք է օգնի նրանց՝ լիարժեք զարգացնելու իրենց անհատականությունը, տաղանդն ու կարողությունները: Պետք է սովորեցնի նրանց՝ հասկանալ սեփական իրավունքները, ինչպես նաև հարգել այլ մարդկանց իրավունքները, մշակույթն ու տարբերությունները: Պետք է օգնի ապրելու խաղաղ պայմաններում և պաշտպանելու շրջակա միջավայրը:

**30** Երեխաներն ունեն իրենց մայրենի լեզվով խոսելու, իրենց մշակույթն ու կրոնը պահպանելու իրավունք, նույնիսկ եթե դրանք տարբեր են տվյալ երկրի բնակչության մեծամասնության լեզվից, մշակույթից և կրոնից:

**31** Յուրաքանչյուր երեխա հանգստանալու, խաղալու և մշակութային ու ստեղծագործական միջոցառումների մասնակցելու իրավունք ունի:

**32** Երեխաները իրավունք ունեն պաշտպանված լինելու իրենց կրթության, առողջության և զարգացման համար վնասակար աշխատանքներից: Եթե երեխաները աշխատում են, նրանք անվտանգ լինելու և բավականաչափ վարձատրության իրավունք ունեն:

**33** Կառավարությունները պետք է երեխաներին զերծ պահեն թմրանյութերի գործածումից, պատրաստումից, տեղափոխումից կամ առքուվաճառքից:

**34** Կառավարությունները պետք է երեխաներին պաշտպանեն սեռական շահագործումից և բռնությունից, այդ թվում այն մարդկանց կողմից, ովքեր երեխաներին ստիպում են սեռական հարաբերություն ունենալ գումարի դիմաց կամ երեխաների մասնակցությամբ սեռական բնույթի տեսանյութեր կամ լուսանկարներ են պատրաստում:

**35** Կառավարությունները պետք է ապահովեն, որ երեխաները չառևանգվեն, չվաճառվեն կամ շահագործման նպատակով չտարվեն այլ երկրներ կամ վայրեր:

**36** Երեխաները իրավունք ունեն պաշտպանված լինելու ցանկացած տեսակի շահագործումից, նույնիսկ եթե դա սահմանված չէ այս Կոնվենցիայով:

**37** Օրենք խախտելու համար մեղադրվող երեխաները չպետք է ենթարկվեն մահապատժի կամ խոշտանգումների, դաժան վերաբերմունքի, ցմահ ազատազրկման կամ մեծահասակների հետ պահվեն միևնույն բանտախցում: Բանտարկությունը պետք է լինի պատժի ծայրահեղ միջոց և կիրառվի հնարավորինս կարճ ժամանակով: Բանտարկված երեխաներին պետք է ցույց տրվի իրավական օգնություն, և նրանք պետք է հնարավորություն ունենան պահպանելու կապը իրենց ընտանիքի հետ:

**38** Պատերազմի ժամանակ երեխաները պաշտպանված լինելու իրավունք ունեն: 15 տարեկանը չլրացած որևէ երեխա չպետք է զորակոչվի կամ մասնակցի պատերազմական գործողությունների:

**39** Երեխաները ունեն աջակցություն ստանալու իրավունք, եթե նրանք վնասվածք են ստացել, անտեսվել են, վատ վերաբերմունքի են արժանացել կամ տուժել են պատերազմի հետևանքով, որպեսզի կարողանան վերականգնել առողջությունն ու արժանապատվությունը:

**40** Օրենքի խախտման համար մեղադրվող երեխաները իրավական օգնության և արդար վերաբերմունքի իրավունք ունեն: Պետք է լինեն այս երեխաներին օգնելու տարբեր եղանակներ, որոնք կնպաստեն համայնքի լավ անդամներ դառնալուն: Բանտարկությունը պետք է լինի պատժի ծայրահեղ միջոց:

**41** Եթե երկրում գործող օրենքներն ավելի լավ են պաշտպանում երեխայի իրավունքները, քան Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ապա կիրառվում են այդ օրենքները:

**42** Կառավարությունները պետք է հնարավոր բոլոր միջոցներով երեխաներին և չափահասներին տեղեկացնեն այս կոնվենցիայի և երեխաների իրավունքների մասին:

**43 54** Այս հոդվածները բացատրում են, թե ինչպես են գործում կառավարությունները, Միավորված ազգերի կազմակերպությունը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը և այլ կազմակերպություններ, որպեսզի բոլոր երեխաները օգտվեն իրենց իրավունքներից:

# ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

### -ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Միավորված ազգերի կազմակերպության՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան կարևոր համաձայնագիր է՝ ընդունված աշխարհի այն երկրների կողմից, որոնք խոստացել են պաշտպանել երեխայի իրավունքները:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան բացատրում է, թե ովքեր են երեխաները, որոնք են նրանց իրավունքները, և թե ինչ պարտականություններ ունեն կառավարությունները: Բոլոր իրավունքները փոխկապակցված են և հավասարապես կարևոր. դրանք չեն կարող խլվել երեխաներից:

Այս գրքույկի բովանդակությունը հավանության է արժանացել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով հանձնաժողովի կողմից:

child rights connect

unicef

յուրաքանչյուր երեխայի համար